Հաստատված է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ 14.07.2008թ հիմնադիր ժողովի կողմից:

Փոփոխված է «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ բաժնետերերի 15.02.2024թ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:

Ժողովի նախագահ և «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն՝ Ա. Կայֆաջյան

Կ. Տ

«ԱՐՄԲՐՈԿ»

բաց բաժնետիրական ընկերության

Արժեթղթերի տեղաբաշխման գործունեության կանոններ

«ԱՐՄԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) արժեթղթերի տեղաբաշխման գործունեությունը կարգավորող կանոնները մշակված են Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան: ***Կետը Փոփոխվել է «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ բաժնետերերի 15.02.2024թ արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ:***

Կանոն 1. Հասկացություններ

1.1. Սույն կանոններում օգտագործված հասկացությունները ունեն ստորև բերված նշանակությունը՝

«Օրենք». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

«Թողարկող». այն անձը, որն արժեթուղթ է թողարկում կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում (Սույն կանոնների առումով «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն թողարկող չի համարվում):

«Արժեթղթերի տեղաբաշխում». Ընկերության կողմից արժեթղթերի առաջին վաճառքը ներդրողին:

«Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում». արժեթղթերի տեղաբաշխումը հրապարակային առաջարկի միջոցով:

«Արժեթղթերի հրապարակային առաջարկ». որակավորված ներդրող չհանդիսացող 100-ից ավելի անձանց կամ անորոշ թվով անձանց ուղղված արժեթղթերի առաջարկը:

«Տեղաբաշխման պայմանագիր». Ընկերության և Թողարկողի միջև գրավոր կնքված պայմանագիր, որի հիման վրա Ընկերությունը իրականացնում է Թողարկողի արժեթղթերի տեղաբաշխումը:

«Ներդրող». անձ, որը նախատեսում է ձեռք բերել արժեթուղթ:

«Ազդագիր». թողարկողի և նրա արժեթղթերի վերաբերյալ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որի հիման վրա իրականացվում է արժեթղթերի հրապարակային առաջարկը և (կամ) թույլտվությունը կարգավորվող շուկայում առևտրին:

«Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց». ցանկացած միջոց, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել:

Կանոն 2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն կանոնները կարգավորում են Ընկերության կողմից իրականացվող արժեթղթերի տեղաբաշխման գործունեությունը, որը իր մեջ ներառում է թողարկողներին հետևյալ ծառայությունների մատուցումը.

ա) արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում,

բ) արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում (այդ թվում խորհրդատվական):

2.2. Ընկերությունը կարող է իրականացնել Թողարկողի արժեթղթերի հրապարակային կամ փակ տեղաբաշխումը՝ ըստ Թողարկողի որոշման:

2.3. Ընկերությունը տեղաբաշխման գործունեությունը կատարում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոններով, Ընկերության այլ կանոններով և Տեղաբաշխման պայմանագրով սահմանված կարգով:

2.4. Տեղաբաշխման պայմանագիրը պետք է ներառի՝

- կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
- տեղաբաշխման ենթակա արժեթղերի թողարկման հիմնական պայմանները (դասը տեսակը, քանակը և այլն),
- տեղաբաշխման հիմնական պայմանները (հրապարակային կամ փակ, երաշխավորված կամ չերաշխավորված և այլն),
- Ընկերության, Թողարկողի և Ներդրողների միջև հաշվարկների և վճարումների իրականացման պայմանները,
- տեղաբաշխման դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
- Թողարկողին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
- Թողարկողի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ Թողարկողի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
- Պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը,
- կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
- Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ Հաճախորդի

կողմից Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով,

- Պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը,
- Օրենքով կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ

2.5. Տեղաբաշխման պայմանագրի հետ մեկտեղ Թողարկողը Ընկերությանը ներկայացնում է նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեղաբաշխման պատվեր:

2.6. Նախքան Տեղաբաշխման պայմանագրի կնքումը Ընկերությունը պետք է Թողարկողին ներկայացնի և նրանից պահանջի Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով սահմանված տեղեկությունները՝ այդ կանոնակարգով սահմանված կարգով:

Կանոն 3. Տեղաբաշխման իրականացման եղանակներն ու կարգը

3.1. Ընկերությունը տեղաբաշխումը կարող է իրականացնել ինչպես երաշխավորված, այնպես էլ չերաշխավորված եղանակով:

3.2. Տեղաբաշխումը համարվում է երաշխավորված եղանակով իրականացվող, եթե.

ա) Ընկերությունը գնում է Թողարկողի արժեթղթերը նախորոք նշված ժամկետում դրանք վերավաճառելու պայմանով կամ

բ) Ընկերությունը ստանձնում է Թողարկողի՝ նախորոք նշված ժամկետում չտեղաբաշխված արժեթղթերը գնելու պարտավորություն:

3.3. Տեղաբաշխումը համարվում է չերաշխավորված եղանակով իրականացվող, եթե ընկերությունը աջակցում է Թողարկողի արժեթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղաբաշխելու ընթացքին՝ չստանձնելով Թողարկողի չտեղաբաշխված արժեթղթերը գնելու պարտավորություն:

3.4. Տեղաբաշխման պայմանագրի հիման վրա Տեղաբաշխողը բացում և վարում է Թողարկողի արժեթղթերի ձեռքբերման հայտերի գրանցամատյան, որտեղ նշվում են՝

ա) հայտի ներկայացման ամսաթիվը և ժամը,

բ) ներդրողի անուն ազգանունը (անվանումը),

գ) ներդրողի անձնագրի (պետական գրանցման վկայականի) տվյալները,

դ) ներդրողի հասցեն (մշտական և բնակության տվյալ պահին),

ե) հայտում նշված արժեթղթերի գինը, քանակը և ընդհանուր գումարը,

զ) արժեթղթերի դիմաց վճարման ձևը,

է) ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:

3.5. Ընկերությունը իրավունք ունի տեղաբաշխման մասնակցության պայմանագրեր կնքել ներդրումային ծառայություններ մատուցող այլ անձանց և ինստիտուցիոնալ ներդրողների հետ, ստեղծել տեղաբաշխման խմբեր:

3.6. Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների կամ անգործության հետևանքով Թողարկողին և Ներդրողներին պատճառված վնասի համար:

3.7. Ընկերությունը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի Տեղաբաշխման պատվերը Թողարկողի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոններ: Այդ նպատակով Ընկերությունը պետք է մշակի պատվերների կատարման քաղաքականություն:

Կանոն 4. Տեղաբաշխման պատվերը

4.1. Թողարկողի արժեթղթերի տեղաբաշխման համար հիմք է հանդիսանում միայն Թողարկողի կողմից ներկայացված տեղաբաշխման պատվերը:

4.2. Թողարկողի կողմից ներկայացվող պատվերը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները առկայության դեպքում.

- տեղաբաշխվող արժեթղթերի դասը, տեսակը,
- արժեթղթերի ձևը (փաստաթղթային, ոչ փաստաթղթային),
- տեղաբաշղվող արժեթղթերի քանակը,
- մեկ արժեթղթի անվանական արժեքը,
- մեկ արժեթղթի տեղաբաշխման գինը,
- Տեղաբաշխման ծավալը՝ տեղաբաշխման գնով,
- տեղաբաշխման ձևը (բաց, փակ),
- տեղաբաշխման եղանակը (երաշխավորված, չերաշխավորված),
- տեղաբաշխողի միջնորդավճարը (բացարձակ գումար կամ տոկոս տեղաբաշխման ծավալից),

- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված այլ տեղեկություններ:

4.3. Տեղաբաշխման պատվերը Թողարկողի կողմից Ընկերությանը պետք է ներկայացվի տեղաբաշխման սկզբի օրվանից առնվազն մեկ օր առաջ:

4.4. Թողարկողը Տեղաբաշխման պատվերները ներկայացնում է, դրանցում փոփոխություններ է կատարում կամ պատվերները հետ է կանչում Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով սահմանված կարգով:

4.5. Թողարկողի կողմից ներկայացված Տեղաբաշխման պատվերները գրանցվում են Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով սահմանված կարգով:

Կանոն 5. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը

5.1. Տեղաբաշխման պատվերը կատարելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան պատվերի կատարման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Ընկերությունը պետք է Թողարկողին տրամադրի Տեղաբաշխման պատվերի կատարման մասին հաշվետվություն:

5.2. Տեղաբաշխման պատվերի կատարման մասին հաշվետվությունը ներառում է՝

- Ընկերության անվանումը,
- Թողարկողի անվանումը,
- յուրաքանչյուր գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
- յուրաքանչյուր գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,
- գործարքների կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),
- արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթերի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),

- միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),
- ընդհանուր ծավալը,
- գանձվող միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը,
- Թողարկողի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին Թողարկողը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),
- տեղեկատվություն այն փաստի մասին, որ Թողարկողի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ Ընկերության մեկ այլ Հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար,

5.3. Սույն կանոնի 5.1. կետով սահմանված հաշվետվությունը ներկայացվում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից հաստատված ձևով:

5.4. Եթե Տեղաբաշխման պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը Թողարկողին է ներկայացնում պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

5.5. Սույն կանոնի համաձայն Թողարկողին ներկայացվող հաշվետվությունը պետք է՝
- ներառի հաշվետվության ներկայացման ամսաթիվը,
- վավերացված լինի Ընկերության գլխավոր տնօրենի ստորագրությամբ և Ընկերության կնիքով:

5.6. Սույն կանոնով սահմանված հաշվետվությունները Թողարկողին ներկայացվում են առձեռն հանձնելու, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով Թողարկողին ուղարկելու միջոցով:

Կանոն 6. Տեղաբաշխման պատվերների կատարման քաղաքականությունը

6.1. Տեղաբաշխման պատվերների կատարման քաղաքականությունը հաստատվում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից:

6.2. Տեղաբաշխման ատվերների կատարման քաղաքականությունը ներառում է տեղեկատվություն գործարքների կնքման տարբեր վայրերի (միջոցների) մասին, ինչպես նաև այն գործոնների մասին, որոնք հաշվի են առնվում այդ վայրերի միջև ընտրություն կատարելիս՝ ըստ արժեթղթերի յուրաքանչյուր դասի:

6.3. Ընկերությունը պետք է Թողարկողին տեղյակ պահի Պատվերների կատարման քաղաքականության մասին և ստանա Թողարկողի նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:

6.4. Ընկերությունը վերանայում է Պատվերների կատարման քաղաքականությունը այն դեպքում, երբ կատարվել է այնպիսի զգալի փոփոխություն, որն այլևս հնարավորություն չի տալիս այդ քաղաքականության համաձայն ընտրված՝ գործարքների կնքման վայրի միջոցով կատարել Թողարկողի Պատվերները Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով:

Կանոն 7. Ընկերության և Թողարկողի, շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը

7.1. Այն դեպքում, երբ Ընկերությունը հիմնավոր փաստերի հիման վրա հանգում է այն եզրակացությանը, որ իր և Թողարկողի միջև Տեղաբաշխման պատվերի կատարման ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան Տեղաբաշխման պատվերի կատարման պահը, Թողարկողին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ:

7.2. Եթե Թողարկողը հրաժարվում է օգտագործել Ընկերության կողմից իրեն առաջարկված շահերի բախումից խուսափելու եղանակները, ապա Ընկերությունը Տեղաբաշխման պատվերը կատարում է այնպես, որպեսզի դրա արդյունքում տուժի ոչ թե Թողարկողը, այլ Ընկերությունը:

Կանոն 8. Հրապարակային տեղաբաշխման առանձնահատկությունները

8.1. Հրապարակային տեղաբաշխման դեպքում Ընկերությունը Տեղաբաշխման պայմանագրով սահմանված լինելու դեպքում պարտավոր է իր ինտերնետային կայքում հրապարակել Ազդագիրը (ծրագրային ազդագիրը), ոչ ուշ քան հրապարակային տեղաբաշխումը սկսելուց 3 աշխատանքային օր առաջ, բացառությամբ այն դեպքերի, երբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն Ազդագրի հրապարակում չի պահանջվում:

8.2. Ընկերությունը Տեղաբաշխման պայմանագրով սահմանված լինելու դեպքում պարտավոր է ցանկացած անձի պահանջով, ոչ ուշ քան նման պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, անվճար տրամադրել

ազդագրի տպագիր տարբերակը, բացառությամբ այն դեպքերի, երբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազդագրի հրապարակում չի պահանջվում:

8.3. Ազդագրի հրապարակելուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան ազդագրի հրապարակմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, Ընկերությունը պարտավոր է հրապարակել հայտարարություն հրապարակային առաջարկի վերաբերյալ՝ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և բովանդակությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազդագրի հրապարակում չի պահանջվում:

8.4. Եթե Ազդագրում, այդ թվում դրա թարգմանության մեջ, որևէ էական փաստ է բաց թողնվել կամ խեղաթյուրվել, ապա Ընկերությունը նման տեղեկության բաց թողնման կամ խեղաթյուրման հետևանքով Ներդրողի կրած վնասները փոխհատուցելու համապարտ պատասխանատվություն է կրում Թողարկողի հետ միասին:

8.5. Ընկերությունն ազատվում է 4.4. կետում նշված պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ բավարար և պատշաճ ուսումնասիրությունից հետո բավարար հիմքեր է ունեցել հավատալու և հավատացել է, որ Ազդագրի գրանցման պահին դրանում սխալ տեղեկատվություն կամ խեղաթյուրում (բացթողում) չի եղել, ինչպես նաև այն դեպքում, եթե վնաս կրած Ներդրողը արժեթղթերը ձեռքբերելու պահին տեղյակ էր կամ ակնհայտորեն կարող էր տեղյակ լինել, որ Ազդագիրը պարունակում է սխալ և ապակողմնորոշիչ տեղեկատվություն, կամ նրանում էական փաստ է բացթողնված կամ խեղաթյուրված:

Կանոն 9. արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում

(ա) Ընկերության կողմից մատուցվող արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունները ներառում են.

- արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ժամանակագրական սխեմայի կազմում,
- արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման հետ կապված որոշումների նախագծերի կազմում,
- Թողարկողի ֆունդամենտալ վերլուծության հիման վրա արժեթղթերի տեղաբաշխման օպտիմալ գնի որոշում,
- դյու-դիլիջենս և ազդագրի կազմում,

- ետշուկայական աջակցություն և արժեթղթերի իրացվելիության ապահովում:

(բ) Սույն կանոնի (ա) կետում նշված ծառայությունները կարող են մատուցվել Տեղաբաշխման պայմանագրի հիման վրա, ինչպես նաև առանձին պայմանագրով:

(գ) Սույն կանոնի (ա) կետում նշված ծառայությունների մատուցումը կարգավորվում է սույն կանոններով, ինչպես նաև Ընկերության խորհրդատվական ծառայությունների մատուցման կանոններով:

Կանոն 9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Սույն կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում հաստատման պահից:

9.2. Սույն կանոնները ուժի մեջ են մտնում «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի՝ Օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկում որպես ներդրումային ընկերություն գրանցվելու պահից: